ՀՀ ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության իրավաբան
պարոն Գ.Հայրապետյանին

23.06.15թ.

Հարգելի պարոն Հայրապետյան

ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարին հասցեագրված Ձեր թիվ 249-ի 8 և թիվ 250-ի 4 հարցումներին ի պատասխան հայտնվում է, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահին ՀՀ օրենսդրությամբ վերապահված չէ հրամաններ արձակելու լիազորություն, ուստի՝ թիվ 250-ի 4 հարցումն այդ մասով մերժվում է:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշումները պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», ուստի, ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, հայտնվում է, որ ՀՀ ԱԺ նախագահի 01.01.2015թ -ից մինչև 01.06.2015թ -ն ընկած ժամանակահատվածում ընդունված ՀՀ ԱԺ նախագահի որոշումները հրապարակված են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» նույն ժամանակահատվածի հրատարակումներում:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահը վերոհիշյալ ժամանակահատվածում ունեցել է երեք գործուղում՝ Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ), Կիպրոս և Կանադա: Նշված երեք գործուղումների համար ծախսվել է 6.242.509 ՀՀ դրամ:

Հարցմամբ պահանջված մյուս տեղեկությունները, կարգադրությունների պատճենները, ուղարկվում է առդիր՝ բաղկացած 206 թերթից:

Հարգանքով՝

Վարչության պետ ***Արսեն Բաբայան***

ՀՀ, ք.Երևան 0095, Բաղրամյան 19, Հեռ./ֆաքս + 374 10 52 74 00, էլ.փոստ. press@parliament.am